

# ԵՐԵՒԱՅ—ԶԱՐԴԱՐԱՆՔ

(ENFANT—BIBELOT<sup>1)</sup>)

ՅԱՄՆՍՈՒԱ ԿՈՊԵՇԻ, ԹԱՐԳՄ. Մ. ՆԱԼԱՍԱՐԴԵՎԱՆԻ

Երբ հասարակութեան հարուստ դասակարգը իմացաւ թէ տիկին Տիշլէրը «հետաքրքրական դրութեան մէջ է գտնւում», վերին աստիճանի զարմացաւ։ Նախ պէտք է ասել, որ ոչ ոք չէր կարծի թէ ոսկիներով կուած այն պարկը—Տիշլէրը, ընդունակ կը լինէր այնպիսի քաջագործութեան, քանի որ նա արդէն յիսուն տարին անցած՝ պասկւել էր մի շատ ջահէլ կնոջ հետ։

Եւ ուղիղ, ի՞նչի էր ամուսնացել նա, քանի որ նոր էր կառուցել Պրոնի փողոցի վրա մի փոքրիկ հիւրանոց իր որդեգրուհի՝ Լուիզ Կաւալիի համար—իսկական անունը Ելիզա Նաւէ էր—տարւայ վերջին հանդէսի այն փառահեղ սանամայրը, որի քաղցրահնչիւն տիտղոսը ճառագայթում էր Մորրիսի բոլոր սիւների վրա։

Բայց Տիշլէրը խորամանկ էր և գիտէր ի՞նչ էր անում վեսայ դառնալով Պարիզի բորսայում պատւաւոր անուն վայելող մի միջնորդի, համարեա մի խեղճ միջնորդի, որը իր աղջկան միայն երկու հարիւր հազար ֆրանկ էր օժիտ տալիս։ Այն, հիանալի դորձ էր անում Տիշլէրը, խաւնելով պատւաւոր կերպով վաստակած փոք-

<sup>1)</sup> Bibelot—նշանակում է փոքրիկ անօթներ, հանքավին կտորներ, քիւրեղներ և ազն, որոնցով զարդարում են բուխարու թարաքներ, գրակալներ և երբեմն էլ դարսում են սեղանների վրա։

բիկ գումարի հետ իր անւանարկ, կասկածելի միլիոնները. և այժմ՝ երբ նա տեսնում էր իր ճաշկերոյթներին, որոնց նախագահում էր իր ջահել կինը, նատառած պատւաւոր նոտարներ և դրամաների վարիչներ, քմծիծաղ էր տալիս ալեխառն բեղերի տակից և ազատ ընթացք էր տալիս տոմբալաներով խճողւած փորին գւարթանալու, մտաբերելով այն վայրկեանները՝ երբ ՖրանքՓուրտից նոր եկած իբր հին շորեր վաճառող հրէայ՝ կանչում էր «հին շորեր առնող» լատինական թաղի նեղլիկ փողոցներում և երբ ուսի վրա կրում էր երկու-երեք վարտիկ և ձև Dampierre մի հին գալարափող:

Անկասկած կինը թանգ արժէր իրեն, շամա թանգ, այն սիրուն ցոփակեաց կինը, որի հետ նա ամուսնացել էր, և շոր կարողի կամ ախնավաճառի հաշիւները նրան երբեմն ծամածռութիւններ էին պատճառում. բայց մոտաբերում էր իսկոյն և եթ մի շահաւետ ձեռնարկութեան մասին, որ ի շնորհս նոր հասուատած յարաբերութիւնների՝ կարողացաւ սկսել մի սքանչելի մասնաժողովի խորհրդով, որի անդամներն էին վաղեմի կուսակալներ և 0\* մակադրւած անուններ. երազում էր ամսւայ վերջը տեղի ունենալիք համարատութեան մասին, որը բեղմասոր էր երևում և լմփոշ ծիծաղելով ասում էր—«ամբողջ վաստակն այս է»:

Այսպէս ահա նրա բաղտաւորութեան մէջ տեղի չոնեցաւ ոչ մի կասկած, երբ կինը նրան յացանեց թէ նա շուտով հայր է զառնալու և այդ ցութեան աչքալոյսը շատ ճշտորէն ընդունեց, մի առանձին հոգարտութեամբ, որը վայել է այնպիսի հանգամանքներում հիսունամեայ տղամարդուն, բորսայ յաճախող սամոյը օձիքաւոր բոլոր ջահիլների կողմից, որոնք նրան շնորհաւորելու եկան բաղտաւոր մանուկի պատճառով, բորսայի կամարագարդ սրահում: Ի՞նչ և է: Այն գիծ, հիանալի տիկին ծիշէրի անձնաւորութիւնը չէր յարմարւում մայրութեան գաղափարին: Այդ ինչպէս. մօտ օրերում նա որպու տէր կը լինի, այն կապուտակն ու կիտրոնագոյն նուրբ պարիզուհին, որը ընթրիքների առիթով հնարել էր մի տեսակ զարդարանք, մի վերին աստիճանի հրապուրիչ սրտածեւ ուսամերկութիւն. շուտով մայր էր դառնալու այն կոախիլիոնի թագուհին, որը բարեգործական նպատակով կայսերած մի վիճակախաղի միջոցին իրաւոնք էր տւել, քսան ու հինգ ոսկի ստանալու հա-

մար, ամենախև հարստականներից մէկին համբոյքներ դրոշմելու շւեղական թռւս կաշւից շինած ձեռնոցի ամբողջ երկարութեամբ, որը ծածկում էր նրա կլոր թերթ: Պառաւ տիկին Բագէրը, Սէնտ-Օնորէ արւարձանի այն ամենաչար լեզուն, որը Տիշէրի դաշնք կապելու օրը ասել էր այս ուշագրաւ խօսքը, «այս կինը սարսափելի կը լինի յիսուն տարեկան հասակում», այդ պառաւ տիկին Բագէրը յայտնում էր ամեն մի ցանկացողին, որ այնպիսի «կիսախել», չափելու աւելին, անընդունակ էր կատարել ընտանիքի մօր պարտաւորութիւնները:

\* \*

Իայց չէ, ամենեին: Այն Կարաբոս ջագուկը սիսալւեց իւր գուշակման մէջ, կամ, ուրիշ ոչինչ չլինի, սկզբում այնպէս էր թւում թէ սիսալւում էր: Տիկին Տիշէրը ծնեց մի թմփիկ աղայ—խնդրեմ, լաւ հասկացէք, և Ֆրանսիայի թագաժառանգի ծնունդը, որ իր օրօրոցի վրա կապոյտ ժապաւէն էր կրում, աւելի սիրալիր ընդունելութիւն չէր գտնի քան թէ փոքրիկ Գիւստավինը. Ի հարկէ, երբ «գիտութեան լշանիր» մանկաբարձուհու ձեռքով լողացրած և բարուրած նորածինը ներկայացրեց ծննդկանին.—կոնդ գլուխ, անատամ, կոյր, մօրթին կարմիր և խորշոմած ինչպէս մի պահունի խնճոր—ջահիլ կինը խոյն և եթ բացականչեց. «Տէր Ասուած, ի՞նչ տղեղ է»: Իայց մայրական բնազդը յաղթանակեց և այնպէս եղաւ, որ հետաքբըիր գունատ հիւսնդը, բարձի վրա սպաւկած՝ առանց զգւանքի համբուրեց հինգ բուգէական հասակի արարածին, որի դէմքը, նոյն միջոցներում, ձեռագիր յիշատակարանների և գեղեցիկ գալրութեան ակաղեմիայի անդամի երեսին էր նմանւում: Իսկ ինչ վերաբերում է հօրը, այս դէպքում նա կատարեալ էր, ցոյց տւեց ամենահաճելի քնքշութիւն, և, մեղայ քեզ տէր Ասուած, մի քառորդ ժամ ուշ ոտք կոխեց բորսայի շէսքի վրա, որտեղ այն օրը մի շատ նշանաւոր ժամադրութիւն ունէր Սեդէլմայէր միջնորդի հետ,—զանգրամորուս մի գեղեցիկ հրէայ, որը սիսալելու չափ նմանում էր Ասուր Բանիփալ արքային, որպիսին կարելի է տեսնել Լուգրում ասօրական թանգարանի արձանների շարքում:

—Ծծմայրը... որտեղ է ծծմայրը, բացականչեց ծըննդկանը, հէնց որ ջահել ակաղեմիկոսը իր առաջին ճիչերն արձակեց:

Յծմայրն այստեղ էր, որին ընտրել էր կանխապէս գիտութեան իշխանը։ Սա մի Պիկարդուհի էր ահազին ազդրներով, հրէշաւոր կոկորդով. գէմքի գոյնը աղասոս ծիրանի գոյն էր ներկացնում, հիւանդանոցում սպասաւորող աղախնի գլխնոցով և հագին ունէր մի ծաղկաւուն դէիրա, որը տեսնողին նողկանք էր ազդում։ —Սարսափելի տգեղ էք, սիրելիս, բայց ոչինչ, ձեր մասին կը հոգանք։

Իսկոյն և եթ մտածեցին. սենեկակինը, որ տիկնոջ հետ միասին այցելի էր՝ ըրեառնական ծովափները, յիշեց կոնկարնօի կանաց համազգեստը։

—Յիշհմւմ էք, տիկին... այն ժիշտը և թեատ բանկոնակը, որ փոքր ինչ նմանուում է զուարների բանկոնակին՝ ուսերը դեղին ժապաւէնով ծրած։

—Իրաւունք ունէք, ֆաննի... իսկ գլխնոցը պքանչելի է։

\* \* \*

Տասն ու հինգ օրից յետոյ,—ապրիլի վերջին օրերից մէկն էր, երբ հասարակաց պարտէզներում կաստանենիք բայցել էին իրանց ձերմակ և վարդագոյն ծաղիկները—տիկին Ծիլէրի որդու ծծմացը հասարակութեան համար հարցասիրական առարկայ էր դարձել Մոնսո պարտէզում։ Իր սարդինիէրի գլխնոցով—որի համար տան բարեկամներից մի նկարիչ մի մանրանկար էր կերտել ձեռաց—Պիկարդուհին նմանուում էր քսան ու չորս թնդանօթակիր մարտանաւին—գլխնոցը ծոծրակին գցած ճեմում էր, որի տակից երեւում էին բոլոր գանդուրներն ու ժանեկիկները։ Գեղեցիկ տիկին Սերֆը, որ մօտ ժամանակներում լոյս աշխարհ էր բերել մի փոքրիկ աղջիկ, փորձեց մրցել զարդարելով իւր աղջկայ ծծմօրը Ֆրիզօի ձեռով և մի ոսկեզօծ սաղաւարտով։ բայց բոլոր մայրերը միահամուռ համաձայնեցին, որ բրետոննական համազգեստը առաւել «Ճաշակաւոր» էր։ Այս բանում տիկին Սերֆը «փուստ մնաց։

Սակայն երեխան, ժանեկիկներում թաղւած, իւրաքանչիւր օր փոքր առ փոքր կորցնում էր զիւանապահ-հնագրի գէմքի ձեւը, որ ծերացել էր XII դարի վանական գրութիւնների մեկնաբանութիւններով։ Նա արդէն սկսել էր մի առանձին եռանդին եռանդով ամուր բռնել

իւր կապկային ձեռնիկներով ծծմօր կարմրաւուն բութ մատը, նրա բերանը կերառում էր փոքրիկներին յատուկ անմիտ ժպիտներ և բազուկները այժմ մեծ-մեծ բացած փայլում էին մի այնպիսի պաշտելի կապտագունութեալր, որը մեզ խորին կերպով համոզում է թէ երեխաները երկնքիցն են իջնում:

Եւ իրաւ, մայրն սկսեց համարեա թէ սիրել նրան: Վերջապէս, նա փոքր եղած ժամանակ երբէք չէր ունեցած աւելի զեղեցիկ խամշուկ (տիկին) և իր որդին աւելի լաւն էր քան թէ այն խամշուկները, որոնց փորին սեղմելով կարելի է ասել տալ—հայրիկ, մայրիկ: Պէտքները կրկսապառկեցին և երբէք ոչ մի ուրիշ երեխաց չի եղել նրանից առաւել զարդարուն: Տեղի ունեցաւ մլրտութիւնը—այն հրէաները բոլորն էլ մլրտւած են, կամ մօտաւորապէս—և պէտք էր տեսնել թէ ի՞նչքան շաքարի անուշեղէն թափւեց: Սեղելմայէր կնքահայրը փոքր ինչ նեղի ընկաւ չաւատամքի վերաբերութեամբ և ծիսակատարութիւնը տեղի ունեցաւ մի փառաւոր՝ Սուրբ Օգոստինոս կամ Երրորդութիւն եկեղեցում: Քահանան իբր լաւ սկեպտիք պարիզեցի՝ գործը վերջացրեց ամբողջը մի շնչում ասելով.

—Կամեննում էք քրիստոնեայ լինել: Ասեցէք կամեննում եմ: Հրաժարում էք սատանի փորձութիւններից: Ասեցէք—հրաժարում եմ: Կրկնեցէք հետս հաւատամքը—հաւատամք ի մի Աստւած, բլա, բլա, բլա, բլա, և ի կեանս յաւիտենական ամէն:

Այն օրը տիկին Տիշլէրը կրում էր մի սքանչելի գդակ և ամենը անցաւ հիանալի կերպով:

Եւ իրաւ, պառաւ տիկին Բագէրը, որին այս բոլոր պարոնները ատում են վիստ խաղալու միջոցին նենգութիւններ անելու պատճառով, շատ չար կինմարդ էր: Նա բամբասել էր տիկին Տիշլէրին, այն խեղճ, փոքրիկ կինմարդուն:

—Նա պաշտելու չափ է սիրում իր որդուն, այնպէս չէ, սիրելիս:

Այն, նա սիրում էր իր որդուն. բայց ինչպէս մի խաղալիք և ոչ առաւել: Որովհետեւ ձեղ էլ լաւ յայտնի է, որ նրա պէս մի շնորհալի անձնաւորութիւն, այնպէս «ժամանակակից»—Տէր Աստւած, որքան չարն են գործածում այս խօսքը—մի անձնաւորութիւն, որն այնքան հրապուրիչ էր «շարժմունքների մէջ», գժւած

էր հնոտիների առուտուրով։ Թրւայ մոլութիւն է այս, որ ոչ մի կապ չունի արեւստասիրութեան զգացմոնքի հետ, բայց որը միջոց է տալիս գլխաւորապէս հարստականներին՝ հաւատացնելու իրանց բարեկամներին, որ իրանք հազւագիւտի և նրբի ճաշակ ունեն և այսպիսով լցնել իրանց մաքի և սրտի սոսկալի գատարկութիւնը։ Գուշակում էք անշուշու, որ տիկին Տիշլէրի բուգուարն ու դահլիճը լիքն էին զարդարանքներով (bibelots), նոյն խկ շատ անյարմար էր այնտեղ մոնելը, երբ մարդիկ գալիս էին շօւր ֆիշ-ին պէտք էր զգուշանալ ամենափոքր շարժմոնք գործելուց անգամ, որպէս զի չկուրեն Միւրանօի մի բաժակ կամ Ռուանի մի հին եղջիւրանօթ, չնայելով որ աթոռները, բոլորն էլ «հին դարի», անյարմար էին ինչպէս տանջելու գործիքները։ Եավոնականութիւնը նոյնպէս իշխում էր տան մէջ. տիկին Տիշլէրը մինչև անգամ փոքր ինչ ճաշակ էր ներշնչել իւր ամուսնուն «բրոնզի առարկաների» և ավատքաշներին մասին. և երբեմն նկատելի էր նրանց մէջ Դրու հիւրանոցի, հակառակորդների հետ մրցող վաղեմի «հնոտիավաճառը» աճուրդում գնած ալբումի մի կտորով կամ մի թրի պատեանով։

\* \* \*

Այսպէս ուրեմն փոքրիկ Գիւտաւուը մի խաղալիք էր, սիրուն տիկին Տիշլէրի հաւաքածոյքի ամենազեղեցիկ զարդարանքը։ Հէնց որ նա կարողացաւ քայլել, նրա մայրը ազատ ընթացք տւեց իւր տարագագէտ հանճարին և որդուն զարդարեց ինչպէս բալէտում պարողին։ Նրա գդակների վրա կզզիաբնակ թռչունները տարածեցին իրանց երփներանգ թևերը, կօշիկների կոճակների վրա Հռենոսի կոպիճները փայլատակեցին, նրա վզնոցը թանգագին ժանեակներից էր կարւած, բոսորագոյն մախմարի և հին ոսկեգոյն առյասի հագուստներ ունէր և տասնութ ամսեայ հասակում արդէն ձեռնոցներ հագաւ։ Բայց որովհետեւ նա խիստ գեղեցիկ սրոնգներ ունէր և հարկաւոր էր անպատճառ նրանցով էլ հիացնել մարդկանց, ման էր զալիս սրնգաբաց, ինչպիսի եղանակ կուգէ թող լինէր, և դողում էր ցրտից թշշաւ աղքատի զաւակի նման։ Այս մասին գովաստնք էր, որ թափւում էր ամեն կողմից։ Որքան էին սխալ ել

սքանչելի տիկին Տիշէրի վերաբերութեամբ։ Նրանից առաւել լաւ մայր չկար, զաւակը փառաւոր էր... Գիտէք որչափ մեծացելէ նա... Տեսել էք նրան, սիրելի տիկին, անհաւատալի հագուստով Պերեաների տանը տեղի ունեցած մանկական երեկոյթում։ Որչափ զւարձալի էր նա իւր երկճիւղ բուշտիով և դալարուն ձեռնափայտով։ Որովհետեւ նա այժմ յաճախում էր բոլոր հանդէսներին, այն երեխայ-զարդարանը, լաւ հասկացէք թէ ինչ բաներ են զգեստաւոր-ւած երեկոյթները։ Հագուստների ամենալաւ պատճառ։ Մարդիկ սքանչացել էին տեսնելով նրան Հենրիկոս III-ի մանկլաւիկի տարա-գով, և ուղղվիկոս XV-ի ժամանակակից աբբայի շորերով, Մաջառի հագուստով և Աբրուցների դեղացու համազգեստով։ Նա մի հիանալի փոքրիկ տղայ էր, խօսք չկայ, իւր սե թաւ մազերով և լա-նման խորունկ աչերով։ Նա այնչափ յայտնի էր դարձել, որ մարդիկ ասում էին. «գեղեցիկ, ինչպէս տիկին Տիշէրի որդին», և երբ հինգ տարեկան եղաւ, մայրն այլ ևս չդիմացաւ և նրա պատկերը նկարել տւեց։

Մտաբերմամբ էք թէ որպիսի աջողութիւն ունեցաւ։ Այս եղաւ առաջին «Սալոնում» պատերազմից յետոյ և ականաւոր նկարիչ Պետրիւ Բերտրանը չէ նկարել կարելի է, առաւել լաւ պատկեր։ Հենց նշանակած օրը՝ պատկերը անւանել էին - Սալոնակ երեխայ։ Եւ իրաւ, արէստագէտը իր վրձիններով և ներկապնակով գործ էր ածել բոլոր ոյժը այնպէս, ինչպէս Թէօֆիլ Գոթիէն իւր գլշով, երբ նա գրում էր Symphonie en blanc majeur երկի ընտիր տողերը։ Ունկայս սառուցեալ բեեռային արջի մորթու վրա և տե-զաւորած ճերմակ մետաքսեայ պաստառւածքի դիմացը, երեխան սպիտակ կոշիկներով, թաւշեայ ճերմակ բլուզով և գլխին մի սպի-տակ խոյր կարապի փետուրով զարդարած։ մի ձեռին բռնած ունէր շուշանի մի ոստ և միւսով կրթնել էր Ասորեստանի խոշոր բարակ շան վրա, ճերմակ ինչպէս ինքը։

Ամբոխը այս տեսնելով՝ գլուխ գործոց կոչեց — ասենք որ չէր էլ սխալում — այս ճերմակութիւնների ցոփութեան առաջ, և Բերտրանը շքանշան ստացաւ։

Գեղեցիկ տիկին Տիշէրը ուրախութիւնից արբեցած՝ այլ ևս չէր բաժանւում Շանզէլիդիկ պալատից, քաշ տալով իր հետ

փոքրիկ Գիւստաւին որ հազնւած էր, շատ հասկանալի է, ինչպէս իր պատկերն էր ցոյց տալիս: Նա անցնում էր հաղարտ-հաղարտ իր չորս կողմը շշուկներ լսելով.

—Դէհ, նայեցէք... նա է... ահա գալիս է այն ձերմսկ երեխան: Որքան ծանօթների էր հանդիսպում նա:

—Ո՛հ, սիրելի բարեկամուհիս, այս ի՞նչ աջողութիւն է... Մարդ շնչառպառում է այս պատկերների առաջ... սա մի հրաշակերտ է:

Եւ ամենքը համբուրում էին փոքրիկ մոդելին, որ քաշ գալով երկու ժամից ի վեր՝ սովածութիւնից փորը վեց-վեց էր անում, իսկ ինքը յոգնածութիւնից յօրանջում էր:

\* \* \*

Այս բոպէից ի վեր երեխայ-զարդարանքը, որի փառքը գագաթնակախն էր հասել, ընկերակցում էր իր մօրը ամեն հանդէսներում, ուր նրան տանում էր. նա մասնակցեց ամբողջ Պարի-րիզին: Զիարշաւներում թողից կուրացած, բաց օդից թմբած և ժխորից ապշած՝ նա ձանձրոյթից չորանում էր կառքում նստած մնալով և թատրոնական առաջին ներկայացումներին նրա տըժգոյն քնարքի երեսը խիստ աչքի էր ընկնում նախաբեմի կարմիր մախմարի վրա: Այժմ նա հռչակւած էր բոլոր յայտնի տեղերում, Նիցցայում; հանքացին ջրերի քաղաքներում, ծովափնեայ մոդայի լողարաններում. երբ լիւշնի պանդոկապետները տեսնում էին նրան անցնելիս պիրենացի ուղեցոյցի տարագով հաղնւած և վարձու առած էշի վրա հեծած, կամ երբ Տրուվիլի հիւրանոցի տէրերը նկատում էին նրան նաւաստու կոկիկ հագուստով գնդախաղին (Lawn—tennis) նայելիս, իրանց ձեռները շփում էին սաելով.

—Ահաւասիկ փոքրիկ Գիւստաւ Տիշլէրը այսաեղ է... սեղոնց աջող կը լինի:

Տարիները սահում էին սակացն, անդմանալի տարիներ: Փոքրիկ Գիւստաւը աճել էր արագապէս և այն երկարատե բարեկենդանը, որ նա վայելել էր մինչև այն օրը, մօտենում էր իր վախճանին. և այժմ հարկաւոր էր անպատճառ շնորհալի երեսուածին հագցնել մեծ տղացի ձեռվ ինչպէս միւսները առհասարակ: Տիկին

Տիշլէրը—քանի մի ժամանակից ի վեր դեղեցիկ տիկին Տիշլէրը—միջոց գտաւ իր որդու զարդարանքով նորից մի «շիք» անելու. նա հաւանեց իր որդու համար և գնեց բաճկոն և վարովիք, դէպի ուսերը տարածող լայն ճերմակ օձիք և ծխնելոցի նման գլանաձև գդակ, որով զարդարւած եօյսներին տեսել էր նա յաղթական կամարի թաղում, երբ այդ երեխաները գնում են աստւածացին պաշտամունքի, որը կատարւում է մի բուրժուացի տանը. այս տան գումար կրում է իր վրա մի պղնձեաց թիթեղ վրան հետեւեալ խօսքերը փորագրւած. «Պաշտամունքը երրորդ յարկումն է»:

Իայց իրաւ որ այն պառաւ գիծ տիկին Բագէրը—ի դէպ, խիստ պառաւ պէտք է լինի նա, ասում են, որ Կազիմիր Պերիէին շատ բարութիւն է արել—այն անիծւած լեզուն իրաւունք ունէր, որ ասում էր թէ տիկին Տիշլէրի մայրական սէրը հաստատուն չէ: Հէնց որ երեխաց-զարդարանքը եօյ ձեռվ հագնեց՝ զարմանալի կերպով նմանում էր երիտասարդ մարդուն և մօտիկ բարեկամուհիները չզլացան նկատողութիւն անել այս մասին:

—Այս, սիրելիս, ինչպէս մեծ որդի ունէք... Որչափ պառաււեցնում է ձեզ այդ:

Այնպէս որ Գիւտաւէին կոխեցին վարժատուն և անցեալ հոկտեմբերին—ժամանակին ինչպէս անցնում է—առաջինից փոխեց երկրորդ դասատունը:

Այժմ նա արդէն մի պամբօ» է մօտ տամնուհինգ տարեկան: Բթացած զիշերօթիկների կեանքից՝ նո մի զզեկի աշակերտ է, որ թագչելով անկիւններում ծխում է իւր կօշիկների կազիմները և որը զրկում է յաճախ տուն գնալուց: Իայց նրա մայրը չէ արտիջում այս մասին, շատ էլ չէ ցանկանում ամենքին ցոյց տալ այս կարճավարտիկ աշակերար: Երբ, բախտի բերմունքով, նա պատժըւած չէ կիրակի օրերը և գալիս է տուն, — բախտ չունի խեղճը, նրա ծնողները քաղաքումն են լնթրում: Նրան կերակուր են տալիս սեղանատան մեծ սեղանի մի ծայրի վրա: Յետոյ նա սպասում է միակ լամպարով վատ լուսաւորւած, ահազին, դատարկ դահլիճում, որ սենեակի ծառան լիցէօն տանի նրան և տեսնելով մթութեան մէջ ճերմակ երեխացի պատկերի աղօտ ցոլումը, որը յիշեցնում է այն վայրկեանները, երբ իր մայրը թւում էր թէ սիրում էր, լալիս է այն մեծ տղան, որի բեղերը բումանում են արդէն:

Խեղճ երեխաց-զարդարանք, այլ ևս ոչ ոքին դուրս չէ գալիս նա: